ԵՐԱԿԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հաւաքեց Մ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՊԱՐ-ԵՐԳԵՐ (Եայլի)

Եար ա՛յլի, եար այլի, եարալու եար:

Զատը եմ զարկել սարին,
Գ.ատայ եմ դրել տարին.
Եար այլի, եար այլի, եարալու եար [1]).
Մութն ընկաւ, տուն այլի, անջիկեար եար. [2]).
Գիտեմ նամուսդ էդ էր,
Խի մտար մեղքիս տակին։

Եարըմ եմ գտել Սասա,
Եարիս տունը փոս ա,
Աստուած սիրող բան չըսայ,
Մէկ ու ճար է, ախտոս ա։

Այլան չինող իմ եարը,
Գ.ալամ բռնող իմ եարը,
Ջուրն առայ ելայ սարը,
Ջ'տեսայ Ֆիղան եարը։

Արև տուր ամառ դնա,
Կանքդ տուր էման դնա,
Եարս ճամպին կ'տեսնես,
Բարև տուր, անցի գնա։

Ուռի ես կանաչել մի,
Մեր դռնէն հեռանալ մի,
Եար, Աստուածդ կ'սիրես,
Հեռու ես մոռանալ մի։

Բարակ ճանապէն մտելես,
Կորցրածդ գտելես,
Նոր վալէդ ոչ վայելես,
Ինձ քու մտից քցելես։

Շահ—Սանամ օտար, օտար, օտար:

Կողպայ, եարը ամպել ա,
Թափով ոսկին բանդել ա.
Շահ-Սանամ օտար, օտար, օտար. [1]).
Շէկ տղի դարուէն վարամուտար։ [2]).
Մեռնիմ աղայ ղըլըղիդ,
Ղ.ըլըղըդ կեղտոտել ա։

---

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ։

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ։

Հայց եմ թխել բոզ ա,
Ընկաւ թընդիրը թոզ ա,
Ելնեմ կայնեմ հարցընեմ,
Եարաք իմ եարը հոս ա։

Կանաչ կարմիր քիսայ,
Գիշերը երպլխա տեսայ,
Ա՛յ նանի, քեզ կըսեմ,
Շէգ ազին էրա փեսայ։

Կանաչ կարմիր ծիտ եմ,
Ձեր բաղի դուռը գիտեմ,
Ուղ թուման քէ մուշտուլուխ,
Քու եարի տեղը գիտեմ։

Աղջիկ ինչ էր գիլակդ,
Օղով կօչկուն բիլակդ,
Մի բանա բանաղ դեօկդ,
Ընձի վառեց կրակդ։

Էս գիշեր լուսնեակ գիշեր,
Կէռ ընքներ կարմիր թշեր,
Աղջիկ՝ Աստուածդ սիրես,
Բաց դուռը գամ էս գիշեր։

Զուրը կ՚ուզայ ափ տալէն,
Երկու շամամ ծափ տալէն,
Հրէս եարս գալիս է,
Ալ բինիշը թափ տալէն։

Զայրս մանեմ լարերով,
Փլաւ եփեմ բիբարով,
Հրէս իմ եարը եկաւ,
Ձիրը լիքը նռաթով։

Էրեկ եմ ցորնի աշան,
Բոլքս բալիդ փերուշան,
Արի երթանք Սուրբ Նշան,
Մանիս տամ քեզի նշան։

Ես սիրեցի խալդը տարաւ։

Ալագեաղ բարձր տեղ է, եար,
Ջուրը հիւանդի դեղ է, եար, եար,
Ես սիրեցի խալդը տարաւ իմ
սիրած եարը [1]).
Օրթէ չ՚առնեմ, ես կ՚մեռնեմ,
իմ սիրած եարը. [2]).
Սիրած սիրածին չեն տայ, եար,
Էս ինչ կռապաշտ տեղ է, եար,
եար։

Երթկայ երթիկ եկելես,
Երթկայ փեսին նստելես,
Իմ հէրը քէ աղջիկ չի տայ,
Ներսախ քունդ կտրելես։

Մեծ արտումը դուշ կ՚ընէր,
Սառը աղբերին թուշ կըլնէր,
Եարս դնա թէղ ուրի,
Եարդ մալամիշ կըլնէր։

Բաղըմունիմ բաղպան չէր,
Բաղըս բաղիդ լման չէր,
Բոլուք-բոլուք դուրս եկան,
Մէկը եարիս լման չէր։

Ամպել է ամպի նման,
Շաքարը զանտի նման,
Իմ նանը ոնց է պահել,
Ծալած դիւլբանդի նման։

Ձիուն ա եկել հալում ա,
Փասը լցուել սառում ա,
Էս էլոզլու խօրաթէն,
Ինձ մամի պէս հալում ա։

---

[1]). [2]). Կրկնել խրատանչիւր երկու տողի վերջը։

Արիաչալը ելել ա,
Եարս դուռը կալնել ա,
Ընձի աչքով անում ա,
Սիրաս ու հոգիս մաշում ա։

Էլել ես կերթաս սարը,
Չ'հարցրիր իմ հալը,
Եարիս սիրուն կ'վառուի,
Ի՞նչ կենեմ դիւլնի մալը։

Տընկոզ ման արի եարս։

Ես աղջիկ եմ ալա եմ,
Տընկոզ ման արի եարս [1]).
Նշանլու եմ խալլի եմ,
Էն տունն ես հարս կերթամ,
Որ տեղ շէղլիկ կ'գտնեմ։

Էս տներ ծեպած տներ,
Մէջը կար ոսկէ սըներ,
Սուն ու գերան բար պիտեր,
Սրտով սիրած եար պիտեր։

Հալը թռաւ թառն էլաւ,
Իմ բանը կռուով էլաւ,
Սաբար, քու որդիդ մեռնի,
Դուշմանի սրտով էլաւ։

Հագել եմ ալ եմ ելել,
Սրտէս հիլալ եմ ելել,
Հէրուալ իմ բիւլբիւլ լեզուն,
Էս տարի լալ եմ ելել։

Քեանքիւլիդ կալին մեռնիմ,
Երեսիդ խալին մեռնիմ,
Լսել եմ կարդացել ես,
Աղմսալիդ կոզին մեռնիմ։

---

[1]) Ամեն մի տողի վերջը կրկնել։

Էս օր գուխանը մերն ա,
Մաճ բռնողը իմ հէրն ա,
Եղնարած շէղլիկ տղէն,
Ալամ գիտէ իմ տէրն ա։

Մեխակ եղայ ծոցդ ընկայ,
Բըխով եղայ ոտքդ ընկայ,
Բանջրխիս դրի քարին,
Կանչեցի զարիպ եարին։

Մանրաթփիկ ըռէհան։

Մանրաթփիկ ըռէհան, [1]).
Էլնինք սարերը սէյրան [2]).
Էլի պարը բոլորաւ,
Եարս մէջը մոլորաւ,
Կալնայ քարին դուշ ելայ,
Սիրած եարիս դուշ ելայ։

Ընկերներով միասեղ,
Ման ես գալի ամեն տեղ,
Թէ որ հետս սէր ունիս,
Ա՛րի էրթանք հէրանց դեղ։

Էս սարը բարձր սար է,
Տակը զանձրուլու քար է,
Առաջս մէկ ու ճար է,
Հաքածը ըռուքեար է։

Գլոխս եմ դրել եարին,
Սիրաս է լիքը արին,
Եարիս եկած մընդամը,
Գրէք իմ խոցուած եարին։

Էս տներ պուճուր տներ,
Մէջին կար ոսկէ սըներ,
Սուն ու գերան բար պիտէր,
Սրտով սիրած եար պիտէր,

---

[1]). [2]). Իրաքանչիւր երկու տողից առաջ կրկնել։

Հայ առալ թազա-թազա,
Ոլը թամամ մին գազ ա,
Մէջն եմ դրել ձուաձեղ,
Որ դնեմ եարիս մազաւ։

Ջուրս տաք է ջուր բերէք,
Էրըվընու նուռ բերէք,
Էլ ու գիւնս թամամ է,
Աղիս եարիս տուն բերէք։

Սօնայ եար։

Ես մի կանաչ խիար եմ,—Սօնայ եար [1]).
Քու ջանին իխթիար եմ,
Երթաս-երթաս հետ կայնիս,
Իմանաս բելլու եար եմ։

Դառնս փակ չեմակալ,
Ինձար քցեմ արի կալ,
Քրօջդ եարի հետը,
Ինձ արել էս քենակալ։

Հօպըմ հօպովլի զեադա։

Հօպըմ հօպովլի զեադա [2]),
Ճրագ դնեմ լիացու,
Կորի քեօրօղլու զեադա. [3]),
Կարմիր խաւէն քիացու,
Ես քու մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։

Բերդիս կաւերը ցել ունիմ,
Ալ աբրեշում թել ունիմ,

Թելիկ-մելիկ սարդաւագ,
Ես քեզանից մէյլ ունիմ։

Բարակ ճանապէն մտել եմ,
Կորցըրածս գտել եմ,
Արտիս սիրածն ինձ տուէք,
Մի ասէք թէ փտել եմ։

Ա՛յ պուճուր աղջիկ։

Ա՛յ պուճուր աղջիկ տալդուքն արի. [1]).
Պուճուր աղջիկ զալում ես,
Ջան պուճուր աղջիկ տալդուքն արի [2]).
Մաղերդ սղալում ես,
Խունջիկ-մունջիկ մի էզնի,
Ինձ առնելու կամ ունիս։

Ծաղիկ քաղեմ դեղին ա,
Իմ եարը ձեր անէն ա,
Էլ ու մեխակ շատ ունիմ,
Հրէս եարիս ձեռին ա։

Արևը գնաց մտաւ,
Սիրած սիրածին գտաւ,
Թէդ արա՛, էլի էրթանք,
Պահած մէյվէս զալ եղաւ։

Մեր տան հետն բաղչայ կայ,
Բաղչի միջին ռէհան կայ,
Ռէհանը քաղող պիտի,
Ծոցումը շամամ պիտի։

Բարիկ մի քելէ փուչ ա,
Եարիս պարդն անուշ ա,
Ա՛յ աղջիկ հրեշտակ ես,
Լուսնեակ ու արեգակ ես։

---

[1]) «Սօնայ եարը» կրկնել ամէն մի տողի վերջը։

[2]) Առաջին տողի սկիզբը կրկնել.
[3]) Երկրորդ տողի սկիզբը կրկնել։

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր տողի սկզբին։

Անց կենում գետի կուռը,
Քաղում մի դաստակ նուռը,
Ո՞վ իմ սիրածն ինձ չիտայ,
Կը քաշեմ քեօխվի դուռը։

Ջուր է գնում արխումը,
Աքրէշումն է չարխումը։
Էն օրին էրնէկ կուտամ,
Ջոմարդ կանգնես խալխումը։

Հօյ եար։

Ծառի տակին էլ ունիմ,
Հօյ եար, ջանըմ նա նայ [1]).
Ալագեօզ եար, ֆիրան եար [2]).
Ըռանք-ըռանք թել ունիմ,
Թելիք-մելիք սարկաւակ,
Ես քու վրէդ սէր ունիմ։

Ջըրի միջի ճիլ խօտը,
Ջան տղի անուշ հօտը,
Ջրի միջին հաւուզ է,
Հոգինդ զանաւուզ է։

Ոչխարը էրել եմ դուզը,
Ջոգել եմ զարագեօզը,
Աղլուխդ զրկէ նախշեմ,
Թաի տուր քեանքիւլիդ թոզը։

Էս ձորն ի վեր ծնեբակ,
Դու զլմանիս արեգակ,
Արեգակը դուս գալուս,
Մէկ էրթանք դարըդուս։

---

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ։

Էրթանք մեր բաղը...։

Գնացի ջուրը ջրին,
Վայ լէ լէ լէ լէ վայ լօ լօ լօ լօ [1]).
Ոտս ընկաւ օձի լեղին,
Էրթանք մեր բաղը, անենք մեր խաղը [2]).
Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
Ինձ տուին զարիպ տղի։

Էս ճամպէքը ոլոր ա,
Ես քեզ տեսայ մոլոր ալ,
Մոլորիս մէկ ճար արա,
Ինձ էլ քեզ ընկեր արա։

Զիւն եկաւ եկաւ գոտիկ,
Ալագեազ սարին մոտիկ,
Աղջիկ՝ դուն ինչ խորոտիկ,
Ձեռս քցի քու գոտիկ։

Տուն եմ չինել զանանայ,
Գեառկու կուտամ դիսանայ,
Կուռդ մեկնի ջուր ինձ տուր,
Խմեմ սիրտս հովանայ։

Ինձի տար քու հ!րանց բաղ,
Ձեր վարդերին դրել շաղ,
Հէրդ ընձի ուզէ քեզ՝,
Ատրծուն կանեմ մատաղ։

Դօյնար Ջան։

Դօյնար, դօյնար, դօյնար ջան [1]).
Ծաղիկ ունիմ ալայ ա,
Դօն, դօն, դօնդիկն է, թագաւորի դոնթիկն է [2]).

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր տողից առաջ։

Ալա չի ալվալալ ա,
Եար բռնելը լաւ կըլնի,
Բաց թողալն բալալ ա։

Ոչխարն էրեցի բակը,
Դէմ առի սէլի ակը,
Վ՞ով օր իմ սիրածն առնի,
Չ՚վալէ գլխի թաղը։

Կանաչ տեխուր մէյտան ա,
Տեսէք իմ եարը տուն ա,
Նոր գալած բեխիդ մեռնիմ,
Ոսկէ թէլի նման ա։

Թարաքեամէն իր օրէն,
Տուէք մինթանիս քեօրէն,
Մինթանիս քեօրէն լէն ա,
Իմ սիրած տղէն էն ա։

Հաբրբան։

Հաբրբան ջան է ջան [1]).
Աղջիկ անուման ես,
Ամենէն գովական ես,
Հալալ կաթնակիր ըլնիս,
Էս գիշեր քովդ տանիս։

Գութան վարենք պտերով,
Քեզ թուցընեմ ճտերով,
Ինձ քեզանից ջոկողին,
Խանչալն ընկնի կողերով։

Սարի թրթնջուկ թաղա,
Ջաւդ ու մեխակ քեզ մաղա,
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին ինց սազա։

---

[1]), Կրկնել իւրաքանչիւր տան սկզբին։

Սիրունիկ ջան, կայնի սէյր անում։

Ա՛յ աղջի հաւր ես, մաւր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
Աղջի, ես որ չ՚լինիմ,
Դու դար քէ դար կը լինես։

Բաղումը կար բաղբանչի,
Շուլին ածա՛ ու կանչի,
Թոխուն դառած դուրս եկան,
Մինն իմ եարին լման չի։

Աւճի եմ աւս քեզնէն,
Բիւլբիւլ եմ բաղս քեզնէն,
Մեռնիմ գերեզման մտնում,
Ջեմ կարէ դաւիս քեզնէն։

Ծաղիկ ունիմ նարնջի,
Այ տղայ արի վինջի,
Իմ մերը քեզ աղջիկ չիտալ,
Քանի՞ ման դաս եաւրնջի։

Մեր դռանը ուռի ծառ,
Ոսկէ կապաւ վրէն թառ,
Էրթար ու դար շորօր տար,
Ալուան ծաղիկ տանել տար։

Հօյ Նարէ։

Նախրատափին խնկի ծառ,
Խնձոր թալեմ արի տար,
Հօյ նարէ, հօյ նարէ [1]),
Զուխէս տամ, դու կարէ [2]),
Ուրբաթ շաբաթ քեզ մօհլաթ,
Լոս կիրակի արի տար։

---

[1]) [2]) Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ։

Աղջիկ՝ անուշդ Մաւի,
Ճակատդ բոլոր շահի,
Թէ որ ինձի հար չէնես,
Վերադ կենեմ շատ դաւի։

Բաղի բոլորը պատ ա,
Հէրն ու մերն ինչ զատ ա,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Վերն Աստուածն չըհատ ա։

Տղայ դնա կալը տես,
Պաղ աղբիւրի սալը տես,
Իմ հէրը քեզ աղջիկ չի տար,
Վախտին գլխիդ ճարը տես։

Սիրունը սիրունի յոդէն,
Սիրունի կապի քեօրէն,
Սիրուն ջան, Աստուած սիրես,
Մի հեռանա իմ մօտէն։

Տեղ եմ քցել փօթ կ՚գայ,
Բարձ եմ դրել սօթ կուգայ,
Միջի քնողին մեռնիմ,
Անուշ խնկահոտ կը գայ։

Ունջուխալու փունջուխալու իմ եարը։

Զուրն էլաւ երես-երես,
Ունջուխալի-փունջուխալի իմ եարը [1])
Բաղբրիկեան Աստուած սիրես,
Նայ նա նայ, նայ նա նայ, նայ նայ նայ [2]).
Դէմ Շորագեալ գնալուս,
Իմ եարս հետդ բերեաւ։

Ժամին գոնէն դուրս կ՚գաս,
Ճրագի պէս լուս կ՚տաս,
Ընձի մոնհան չենես,
Թէղ թէղ դու իմ մօտս դաս։

Ա՛յ տղայ. հուբ ես մուբ ես,
Ես ծարաւ եմ դու ջուր ես,
Մախմուրէ բանուած շոր ես,
Համբարձուայ դիշերն ուր ես։

Սարերը սրով գնաց,
Իմ եարս խռով գնաց,
Ոչ ղուշ եղաւ, ոչ կաղաւ,
Ձեռնէս թռաւ ու գնաց։

Դիլբար ջան...:

Դարբազի դուռը հով է,
Դիլբար ջան, դիլբար ջան, [1]).
Դիլբար ջան, դօշդ մի բանա, [2]).
Նշանլու սալդատ եմ, ես չեմ դիմանալ [2])։
Սիրուն աղջիկ՝ ինձ գովէ,
Կիրակի բան մի էնէ,
Իմ սիրտը արընծով է։

Ամպէլ ա ամդի տակին,
Ծունկս ծնկանդ տակին,
Ես քեզ որտեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

Կայնել ես եառի վերայ,
Զինարի ծառի վերայ,
Փուսքիւլի ֆաս ես դրել,
Սատաֆ մազերիդ վերայ։

Էս դիշեր երազ տեսայ,
Արտերս վարած տեսայ,
Ամօթ քեզի, ա՛յ տղայ,
Քու եարը տարած տեսայ։

---

[1]). [2]). Կրկնել առաջին և երկրորդ տողերից յետոյ։

[1]). [2]). [3]). Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ։

Գարանֆիլս գեղին է,
Ձեռ քցածըս գեղինն է,
Միս ոսկառէս որ ջակեն,
Մէկ կտորս էն աղինն է։

Ա՛յ սար ու սէյրան։

Ա՛յ սար ու սէյրան ու եար, [1]).
Մարալ ու ջէյրան ու եար. [2]).
Ջաղացս ման եմ տուել,
Սիրել եմ ջան եմ տուել,
Օխտը տարի սէրութիւն,
Մէկ օր պայման եմ տուել։

Ծառայ տակին վար կանեմ,
Ջալ ապռաւին քար կանեմ,
Իմ սիրածը ինձ տուէք,
Խելքռութիւնս թարկ կանեմ։

Կողքայ քարերը մաղան ա,
Իմ եարն ընձի բաղան ա,
Ասին, եարդ հիւանդ ա,
Մարալ եղը մատաղ ա։

Սիրուն եարս նուռ բերեց,
Ամենքին էլ տուն բերեց,
Աստուած մեռնեմ դաղդեահիդ,
Էս դուլումը ինց բերեց։

Ջաղացիս աչքայ կուռը,
Կը ղընկայ մինչի գիւղը,
Վայ իմ սիրած ըլուլիւլը,
Քաչեցին խանի դուռը։

Կապոյտ թայը տակիս ա,
Ալ բաղդատին բկիս ա,
Ինչայ չայը ջուր խըմի։
Շէկ քեանքիւլ թեներիս ա։

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր երկու տողից առաջ։

Հա՛յ նուռայ։

Հայ նուբար, նուբար, նուբար [1]).
Իմ բոյ քու բոյ բարենքար. [2]).
Հայ նուբար, նուբար, նուբար, [3]).
Սարերու ծաղիկ նուբար։ [4]).

Սիպտակ ձին նալն ինչ կենէ,
Սիրունը խալն ինչ կենէ,
Գեղի սիրող խղիթը,
Գիւղնի մալն ինչ կենէ։

Ա՛յ աղայ դու բաղոմէ արի,
Ոտներդ չաղոմէ արի,
Էս թաղը զալմաղալ ա,
Ման տուր էն թաղոմէ արի։

Սարերը զուրս է գառել,
Արինը սիրտս է առել,
Հեռու տեղ ճամբորդ եմ,
Աչքերս չորս է գառել։

Կանաչ արտի քեանարը.
Ո՞վ է տեսել իմ եարը,
Գարաքի գլխի ջուրը,
Սարաղտան քոչենք տարը։

Ա՛յ աղայ, արի գնա,
Շաբիկդ տուր ու գնա,
Լըռամ-լըռամ չ'իտալկուի,
Վարդաջրեմ խտալկուի։

Ջաար եմ զարկել գարին,
Իրդար եմ տուել եարին,
Ի՞նչ կենեմ լաքաղանը,
Ինձ տուէք մին ու ճարին։

---

[1]). [2]). [3]). [4]). Այս գարձուածքները կրկնել իւրաքանչիւր երկու տողից առաջ։

Սիրուն է։

Երևան ասի եարս,
Բաղդատ խուրմաի եարս,
Շաքի, Շիրուան, Շամախի,
Թարվէդ քաղաքի եարս։

Ամպել ա ամպոց վրայ,
Ամպել ա եալլոց վրայ,
Ամպեր, Աստուած կ'սիրէք,
Դուք չ'գաք եարիս վրայ։

Սև փուշին ճիտս եմ քցել,
Կրակը սիրտս եմ քցել,
Էս օր չորս օր չեմ տեսել,
Իմ եարս միտս եմ քցել։

Վարդ եմ քաղել մաղերով,
Փունջ եմ կապել խաղերով,
Հրէս եկաւ իմ եարը,
Քէֆ ու սօլֆատ անելով։

Ամպել ա յուտայ յուտայ,
Զեռացդ կարմիր թութ ա,
Էն ալ ֆասով աղջիկը,
Ինձի տուել են բուտայ։

Պատի տակը տալդա է,
Էս ինչ անուշ դալդա է,
Թողէք եարս առաջ գայ,
Ջանս ընդուր բաղալ ա։

Լուսնակը ընձի ցորեկ,
Շիրուանու քեարվան բերէք,
Աղլուխս մուժտա կտրամ,
Եարիցս խաբար բերէք։

Ծառի քոքը կանաչ է,
Եարը-եարին ճանանչ է,
Ինչքան որ նեղ տեղ-ընկնիս,
Սուրբ Կարապետին կանչէ։

Ա՛յ տղայ հուբ ես-մուբ ես,
Ես ծարաւ եմ, դու ջուբ ես,
Արի գնանք ուխտ անենք,
Մեր դուշմանին խաղք անենք։

Կողրայ քամին բոլորաւ,
Եարիս բեխերն ոլորաւ,
Եարիս գրեցին սալդատ,
Սիրտս վորս մոլորաւ։

Ա՛յ տղայ իր անել տուր,
Մի մասը գիր անել տուր,
Ինձանից քեզ ճար չ'կայ,
Քեանքիւլդ վեր անել տուր։

Պուճուր աղջիկ սեաւոր,
Հալդի դռները սոլոր,
Գնա մէրդ կանչըմա,
Թող ինձ չ'անէ մեղաւոր։

Ղարաանֆիլ եմ տալ չունիմ
Ղոչ խղխա եմ եար չունիմ,
Ջրերն եկաւ տուրներ,
Գրող խեղդէ պատուրներ։

Ջաղացիս դուռը փոս ա,
Քարը քցիմ կը խոտա,
Կանչէ, կանչելուդ մեռնիմ,
Իմ նանուն ազիզ փեսայ։

Հո՜յ կար:

Աղջի ճրագը լուս տուր,
Ջերմիդ քիշմիշը գուրս տուր,
Աղիզ կար ջան գուռը բաց,
Ոաներս ցըրտուն գնաց։

Ձեր լաղի գուռը բաց ա,
Ոաներս չաղում թաց ա,
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը թաց ա։

Մուղնի գեօլը սեր սարը,
Մուղնի էրթող իմ կարը,
Թող էրթալ մուրազն առնի,
Ես դառնալ սիրածն առնի։

Գնացի չալը լուած ք,
Սապօնս էր ոսկէ ջրած,
Իմ հէրն ու մէրը ինչ անեն,
Էս էր ճակատիս գրած։

Էղնինք սիրուն կար:

Մեչի միջի պաղ աղբիւր,
Տղայ արի սար քու քուր,
Քու քուրն ընձի հաւան չէ,
Տար ընձանէն, լաւին տուր։

Կալլի բոլոր կանաչ է,
Տունդ մեղի ճանաչ է,
Մեռնիմ շամամ ծծերիդ,
Իմ դարս քեզի ալան չէ։

Աղջի անուշդ էլիս,
Արի նստիր իմ կոխակիս,
Ես ու դու բազում պիտենք,
Ես չինարի դու նարդիզ։

Արևն առաւ գերանին,
Ես մեռնիմ Աւետրանին,
Ջուխտ աղունիկ դուրս եկան,
Կանանչ ճիւղը բերանին։

Սիպտակ ձին նալն ինչ կենէմ,
Վարսոս խալն ինչ կենէ,
Եարն, որ եարին սիրէ,
Աս ու լիան ինչ կենէ։

Էրկէն արտը բիար ա,
Ձեռքդ կանանչ խիար ա,
Աղջի կուզեմ հաց տանեմ,
Սինձ քաղում դատտա արա։

Էս ճամպից մէկ քոչ անցաւ,
Քոչը առաւ մէջ անցաւ,
Սիրտս մէկ կրակ ընկաւ,
Ոչ վառաւ, ոչ հանքաւ։

Քնասիրի քնարուան Մարօ Ջան:

Ծաղիկ ծաղկեվանում ես,
Ձինով Երևանում ես,
Տարէնը մի հետ կ'գաս,
Մագեամ նուրբար խանում ես։

Գիւլումգիւլումգիւլ չիչակ
Էս ու դու մանենք մի գոշակ,
Մինչեվ լոս փչփըչանք,
Լուսէն լեսոյ կըչկըչանք։

Բարակ ճանպէն մտել ես,
Կորցրածդ գտել ես,
Զիթ արդալուխդ չմաշես,
Ընձի մտէս քցել ես։

Գնացի Ջուրը տեսայ,
Ձայրից երեսդ տեսայ,
Ցլած բեխերուդ մեռնեմ,
Իմ մօր դու ապիկ փեսայ։

Իզուր սարերը-դուման է:

Կաղբրվանու ձորէն եմ,
Մեծ բաղի խնձորէն եմ,
Խնձոր եղել հասել եմ,
Բիւլբիւլի հետ խօսել եմ։

Դու նստել ես դերանին,
Ղարդու չուին բերանին,
Ոսկէ զայթան եմ գործել,
Կարեմ ջերիդ բերանին։

Տղայ հաղնող ալ կապով,
Հար-եր անցնես մեր դռնով,
Կերթամ կասեմ աղբօր,
Կուգայ զարկէ խանչալով։

Ա՛յ տղայ աստ մ'աստ,
Գտակիդ թափէն խաստ ա,
Իմ մէրը ինձ քեզ չի տայ,
Իմ հօրը քըրթամ ասա։

Հով արէք սարեր ջան, հով արէք:

Հով արէք սարեր ջան, հով արէք [1].
Իմ դարդին դարման արէք, [2]).
Ղութնի գոչակ տակըս է,
Ղութնի եօրդան վըրէս է,
Խալի բարձը գըլխիս է,
Շէկ աղջիկը ծոցիս է։

Աղջի արի էս ըլին,
Երկու ջէյրան բուրդ գլին,
Սիրած սիրածի չէն տայ,
Մեղքը հօրն ու մօր վըրին։

Երևան դիւքեանց- դիւքեան,
Ձերմակ շուշէն ստաքան,
Քեզի որ ես սիրեցի,
Դուշմընների տրաքան։

Ես հաւի ձուն փորն է,
Իմ եարը գեանջու կուռն է,
Գեանջա, քու տարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ։

Ա՛յ տղայ ծառ լինիս,
Ես հաւի կատար լինիս,
Ինձ մէկ խուժար եար սիրէ,
Դու ճոռթ ու պատառ լինիս։

Հաբրբան:

Հաբրբան, հաբրբան, հաբրբան քեզ դուրպան, [1]).
Հաբրբան օյ, օյ, հաբրբան օյ, օյ, [2]).
Սինամ տարեր օյ, օյ. [3]).
Աղջիկ, աղջիկ Հերիքնազ,
Վեր կաց ձեռդ ածէ տազ,
Մենք բիթունքս կանենք տազ,
Որ քեզանով անենք հազ։

Ուռի ես կռանալ մի,
Մեր դռնէն հեռանալ մի,
Լա՛ Ատուածդ կ'սիրես,
Սիրել ես մոռանալ մի։

Մէ եարմ ունիմ անուշ է,
Հալած արծաթէ դուշ է,
Բաղերի մէջին տեսալ,
Ես ասի թառլան դուշ է։

---

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր երգու տողից առաջ։

[1]). [2]). [3]). Հետևեալ տունը երգել այս տեսակ։

Մեր բաղումը բաղպանչի,
Սալվի ծառին նման չի,
Շատ հարսն աղջիկ դուրս եկան
Ոչ մէկն եարիս նման չի։

Ջուղթ գութան սար կ'բանի,
Շէգ աղջիկ հաց կ'տանի,
Մէկ կերթայ մէկ կը կայնի,
Խելք ու լման կ'տանի։

Լուսնի լուսնեակը ես եմ,
Ծովերի ձուկը ես եմ,
Գիշերուայ փախնող աղջիկ,
Հեռվդ ընկերը ես եմ։

Սոնէ։

Ղարսայ ջուրը պաղ պուպ է,
Իմ եարս թոփի կ'ուղէ,
Կարել է թոփլու թելը,
Զարկել եմ չատմի ծէրը։

Զաղացիս դուռը տաշած,
Աղլուխիս գիւլը քաշած,
Մեռնեմ կեռ-կեռ ունքերիդ,
Օսկէ զալամով քաշած։

Պուճուր աղջիկ մի թռնի,
Բարով քու մարդը մեռնի,
Բան չեմ ըսէ անէծք է,
Ոտներդ քամին տանի։

Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ,
Հարս ու աղջիկ մեծրել եմ,
Որ գան ու քաղին ծաղիկ։

Ծառ եմ տնկել քիրպի,
Գիշեր քնաւ երպի,
Ընկերտիք, Աստուած կանչէք,
Ես էլ հասնիմ մուրպի։

Բաղրամ ունիմ զամուշ է,
Միջի մէյվէն անուշ է,
Միք մեղրի, մէր ու քուրշ,
Արտով սիրածն անուշ է։

Թառօն գնաց բանջրի,
Բանջար չելաւ խոտ էլաւ,
Խոտի մէջէն ճուտ էլաւ,
Ձո տը թառ զոզն ընկաւ։

Ղաշանկ ես, Հերիքօ՝։

Ղաշանկ ես Հերիքօ, [1]),
Տնկոզ ես, Հերիքօ [2]),
Էշխով ես, Հերիքօ [3]).

Հերիք նմանդ հօրդ ես,
Աչք ու քիսապատրդ մօրդ ես,
Սիրեցի ըսի առնեմ,
Ֆալաքը կոտրեց մէջքս։

Շիմշիր դռաւ Շիրուանի,
Քամին թել-թել կը տանի,
Միք մեղրի մարիկներ,
Էս սէր եամ՝ն կը տանի։

Լուսնեակի լուսը ես եմ,
Քեզի սիրողը ես եմ,
Գիշերուայ քրանող եար,
Ծոծիդ ընկերը ես եմ։

Ապուր եմ եփել արի,
Ուտողի սիրտը դարի,
Ես ու դու իրար սիրենք,
Թող դուշմանը կատարի։

---

[1]). [2]). [3]). Կրկնել խրատքանչիւր երկու տողից առաջ։

Էս սարը մառալին մնաց,
Գիւլը Անօին մնաց,
Սիրեցի հալդը տարան,
Ընձի ինչ ֆայսայ մնաց։

Գնացի ջուրը տեսայ,
Շուշարանդ դուռը տեսայ,
Իմ նանիս ապիկ փնտայ,
Գիւլգեսալ երեսդ տեսայ։

Կաքաւ եմ քարամիջում,
Վը կարդամ ձորամիջում,
Աստուած, իմ մուրազս տուր,
Էս գալող շաբթու միջում։

Ամման Օսման Ջան։

Ջաղացի առջին չիման,
Ամման Օսման Ջան, ամման Օսման Ջան, [1]).
Աղջիկան չկայ իման,
Օ՛ զաշանք եար Ջան. [2]).
Եարը գրեցին տարան.
Մէ բերան չըտաւ ամման։

Ջուրը առայ ելայ դարը,
Ջը տեսայ ֆիտան եարը,
Ֆիտան եարը ինձ տուէք,
Ջը քաշեմ անուդարը։

Ղարաղալա արտ չունիմ,
Հալդը գիտեն դարտ չունիմ,
Դարտը ընձի փաթթել է,
Ջահիլ եմ խարտար չունիմ։

Ցերկեն գամը տալել եմ,
Ղըռ ձին մէջը կապել եմ,
Ղըռ ձին ինչ կանէ նալը,
Սիրուն ինչ կանէ խալը։

Գիւլում կատեմ կը շարեմ,
Ջրուալը կածեմ կը շարեմ,
Թամամ աշխարհ մանն կուգամ,
Քեզնից լաւը կը ճարեմ։

Ճերմակ սարը մօտիկ է,
Ձիւնը եկել գոտիկ է,
Մեռնիմ իմ եարիս բոյին,
Տունը սանդը մօտիկ է։

Անցայ Արտդն էն վաթան,
Փռել եմ թոփիմ քեաթան,
Ով որ իմ սիրածն առնի,
Կարեմ աղիդի պատան։

Ձիւնարի ծառ։

Կարմիր քարը տաշած է,
Բոյրս զալմով քաշած է,
Ես ինչ կէնեմ էդ բոյը,
Սիրտս հալած մաշած է։

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա,
Եարիցդ հեռացել ես,
Աչքերդ լիքը թաց ա։

Աղջիկ-աղջիկ ալ աղջիկ,
Երեսդ խալ-խալ աղջիկ,
Էրնեկ էն օրին կըլնի,
Իմ քուրը քեզ տալ աղջիկ։

Մէ եարմ ունիմ անուշ է,
Հալած արծաթէ զուշ է,
Աղջիկներն մէջ տեսայ,
Ես ասի թառլան զուշ է։

---

[1]). [2]). Կրկնել խրատանշիւր տողից յետոյ։

Ամբոնները համամ է,
Ենգի բիւրեր չամամ է,
Ես էն աղջկան կառնեմ,
Որ իւր սովդէն թամամ է։

Սար, սար, սարումն արի։

Այ տղայ հուրիկ մուրիկ,
Երեսդ նռան հատիկ,
Ի՞նչ վազդ ես քեզ կը տեսնեմ,
Համ Համբարձում, համ Զատիկ։

Էս սարերը խաղանայ,
Կանուչ հագնի թաղանայ,
Ոչ աչքս քեզի տեսնի,
Որ եարէքս թաղանայ։

Արալը-նըզանըմ գեամին,
Գեօքսիս ա տալիս քամին,
Ես մի զարիպ ջան ունիմ,
Հասրաթ եմ ծոծիդ համին։

Ամպել ա բութայ-բութայ,
Կերածդ կարմիր թութ ա,
Էն խաղ ըսաղ աղջիկը,
Բռնել եմ ընձի բուդայ։ (սի-
բական)

Մեծ արտումը փուշ կըլնի,
Ուռըն աղբրին դուշ կըլնի,
Ո՞ւր գնում ես թէղ արի,
Եարդ քեզ կարօտ կըլնի։

Ամպել ա լուլա-լուլա,
Եարս ինձ համար կ'ուլայ,
Շան տղայ հերիք հաչաս,
Մեր դռան բալաք թուլայ։

Ամբոնները համամ է։

Ամբոնները համամ է,
Ենգի բիւրեր չամամ է,
Ես էն աղջկան կառնեմ,
Որ իւր սովդէն թամամ է։

Սար, սար, սարումն արի։

Այ տղայ հուրիկ մուրիկ,
Երեսդ նռան հատիկ,
Ի՞նչ վազդ ես քեզ կը տեսնեմ,
Համ Համբարձում, համ Զատիկ։

Էս սարերը խաղանայ,
Կանուչ հագնի թաղանայ,
Ոչ աչքս քեզի տեսնի,
Որ եարէքս թաղանայ։

Արալը-նըզանըմ գեամին,
Գեօքսիս ա տալիս քամին,
Ես մի զարիպ ջան ունիմ,
Հասրաթ եմ ծոծիդ համին։

Ամպել ա բութայ-բութայ,
Կերածդ կարմիր թութ ա,
Էն խաղ ըսաղ աղջիկը,
Բռնել եմ ընձի բուդայ։ (սի-
բական)

Մեծ արտումը փուշ կըլնի,
Ուռըն աղբրին դուշ կըլնի,
Ո՞ւր գնում ես թէղ արի,
Եարդ քեզ կարօտ կըլնի։

Ամպել ա լուլա-լուլա,
Եարս ինձ համար կ'ուլայ,
Շան տղայ հերիք հաչաս,
Մեր դռան բալաք թուլայ։

Ինչ՝ եար ջան։

Արի եար ջան, արի առն, [1]։
Հաւէն ամպ է կ'ուզայ ձուն։ [2]։

Փոկը կորաւ էն արտէն,
Վառայ էվայ քու դարտէն,
Աղջի փոխէ էս դայտէն,
Ումուտ կտրեց չան գեատէն։

Մուղնըվայ գեօլը լողցայ,
Մուղնըվայ չուչպէն[3])գողցայ,
Եօթ տարի հիւընդցայ,
Եարս եկաւ լաւացայ։

Ամպէլ է, երկինք մութ է,
Աչխարքի վերջը փուտ է,
Թող իմ սիրածն ընձի տան,
Բիրատի տեղն տուտ է։

Սուրբ Կարապետ քու վանքը,
Ղազախի նախշուն թամբքը,
Արդ էնեմ թաղաւորին,
Անցել է հալու կեանքը։

Կերածս կարմիր թութ ա,
Ես կառնեմ նանս չի տայ,
Ադա, քու հոդուն մատաղ,
Ուրիշին իրխար մի տայ։

Զաչացս պատիկ-պատիկ,
Աչքերդ նռան հատիկ,
Ամեն քեզի տեսնելիս,
Համ Համբարձում, համ Զատիկ։

Կաբաւ թռնի քարերուն,
Ցելնի իջնի դարերուն,
Եարիս կանչեմ ջուր տանի,
Թուշը պաղեմ զրկեմ առն։

---

[1]). [2]). Կրկնել ամէն մի տողից առաջ։

[3]) Աւեստարան կամ խաչ փաթաթելու շոր։

Եարս մի տանէր եալէն:

Սարերը լալա չ'կայ,
Եարս մի տանէր եալէն, [1]).
Նստել կուլամ չարա չկայ,
Աչքս կը մնայ ճանապէն [2]).
Սարերը ծակոտել էր,
Ոչխարը արկոտել էր։

Պուճուր աղջիկ գալում ես,
Մազերդ ազալում ես,
Ընձի տեսնում լալում ես,
Ցետես ընկնում գալում ես։

Սարերի սինձը ինչ է,
Կաթն ու բրինձը ինչ է,
Եարն որ եարին սիրէ
Խօսք ու գրիցն ինչ է։

Կայնի, եարս, կայնի գամ,
Կայնի էղնինք բարեկամ,
Կայնի, եարս, գալիս եմ,
Գրանել եմ, լալիս եմ։

Աղջի անուանդ թաքուն,
Նստել ես հօրդ սաքուն,
Ինչիս չըխուսալ բոյ ունիս,
Երանի եարիդ հոգուն։

Ելայ գնացի բէրը,
Գաչել եմ կաթի սերը,
Ջ'տուին հէրն ու մէրը,
Պարտական տէրտէրները։

---

[1]). [2]). Կրկնել իւրաքանչիւր տողից յետոյ։

Արի սիրական:

Էս օր նորը նորել է,
Արի սիրական եար ջան, [1]).
Եարիս եղը կորել է,
Գեարդանիդ տալի մարջան, [2]).
Ով որ գտնէ թողե տայ,
Գեամարս կուտամ մուժտայ։

Գնա, գնա, քեզ հետ գամ,
Հետ քու շուշի ձէնին գամ,
Փառչամ էղնիմ ու ջուր տամ,
Պաղամ առնեմ ու լեռ գամ։

Պուճուր աղջիկ մի թռնի,
Բարով քու մարդը մեռնի,
Ձեմ ղըմըշի անիծեմ,
Գամին չոքերդ տանի։

Նանէն մածուն ա մերել,
Փեսէկուն տուն ա բերել,
Անտէր մնար չալ կատուն,
Փեսեկու փայն ա կերել։

Արևը կեռ ու կամար,
Ես կը մեռնիմ քեզ համար,
Օխթը տարի դիմացայ,
Մենակ քու խաթեր համար։

Նանէն ընձի թակել է,
Դուռն երեսս փակել է,
Ես նանիցս ջորել եմ,
Գիտաբ զուրպատ կորեմ եմ։

---

[1]). [2]). Կրկրել իւրաքանչիւր տողից յետոյ։

***

Պտեմ պտեմ աղջի ջան,
Ցովը կթեմ աղջի ջան,
Գիշերը որ գաս ինձ մօտ,
Քե խբարեմ աղջի ջան։

Ման դալով ամեն լաւ տեղ,
Քաղենք ծաղիկ միատեղ,
Փնջեր կապենք մեր մէջ տեղ,
Խաղ ասելով տանենք գեղ։

Մեր բարդուքը բարձր ա,
Սիրած եարս քաղցր ա,
Գնա մօրս հարցրա,
Արի ինձի փախցրա։

Ղէ տուր, ղէ տուր աղջի
ջան,
Ես քու խեղճ դուլ աղջի ջան,
Էրուած սրտիս փափաքը,
Շուտ արա տուր աղջի ջան։

Էս տարը բարձր տար ա,
Մինչին դարդեարի քար ա,
Մուղնըուայ ջուրը տառն ա,
Մուղնի էրթողն իմ եարն ա։

Բալաբաններիը դարկին,
Կաղարմէն տալգատ էյին,
Սալգատ զամի տուն չունէր,
Գիշեր անուշ քուն չունէր։

Ալին ալմալու գեատայ։

Ձալէն ի վեր ծնէվակ,
Ալին ալմալու գեատայ, [1]).
Շողակոլոլ արեգակ,
Զուխէդ չաքմալու գեատայ, [2]).

[1]). [2]). Կրկնել խրատքանչիւր տողից յետոյ։

Արեգակին թև աղբեր,
Շաքեար կոտրեմ կէր աղբեր։

Բարակ առու, դուլալ ջուր,
Գեղդա թառալու ջուղաբ տուր.
Ծառին ըսի բարդի տուր,
Սրտիս սիրած եարս տուր։

Ղէշլի բոլոր աղջի ջան,
Քարափ ու քօլ աղջի ջան,
Թէ դու ինձի չառնես,
Ընկնիս խօլեր աղջի ջան։

Ժամի բոլոր աւաղ է,
Ուստայ ջուքէդ դիւվաղ է,
Ժամը չինէ գլոխ բեր,
Վանքը մեղի մուրաղ է։

Աղջի դիւզալ եար ունիս,
Հազիա կուրտուշկայ ունիս,
Հեռու գնա ինձնից,
Երեսիդ ապուռ չունիս։

Մեր դռանը ուռի ծառ,
Մարճան բիւլբիւլ վրէն թառ,
Էրթար ու գար շորոր տար,
Կարմիր խնձոր թալեմ տար։

Սև ամպերը պարզում չէ,
Սիպտակ եալլուղ ապում չէ,
Եօթը տարի ալ հազնիմ,
Սիրտս սև է ապում չէ։

Վանքի բոլոր ալա է,
Մէջը լիքը վալա է,
Վանքի բոլոր զամիշ է,
Քանի կանչեմ անուշ է։